**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

## 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 6 մարտի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 29-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ կենդանիների առողջության եւ անասնաբուժության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Դ. Լոքյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա

մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՊԱՐԶԵՑ.

1. Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ կենդանիների առողջության եւ անասնաբուժության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2006 թվականի նոյեմբերի 29-ին՝ Երեւանում:

Համաձայնագրի նպատակն է վերահսկել, կանխել կենդանիների հիվանդությունները, զարգացնել ցամաքային եւ ծովային կենդանիների վերահսկման համակարգը, ինչպես նաեւ փոխադարձ համագործակցությունը՝ ուղղված ՄՀԳ ցամաքային ու ջրային առողջապահության նորմերով (այսուհետ՝ Նորմեր) սահմանված՝ անասնաբուժությանն առնչվող ապրանքատեսակների առեւտրային գործարքները դյուրացնելուն:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության սկզբունքով, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի ՀՀ-ի եւ Իրանի իրավասու մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակումն իրականացվի ուղղակիորեն՝ ի լրումն կենդանիների հիվանդությունների նկարագրությունն ուղարկելու ցուցումներում սահմանված կարգի (ամսական եւ եռամսյակը մեկ),

- ՄՀԳ Նորմերով եւ ՀՀ կողմից հաստատված պարտադիր ծանուցման ենթակա հիվանդությունների ցանկում փոփոխություն առաջանալու դեպքում այդ մասին 60 օրվա ընթացքում ծանուցել Իրանական կողմին,

- համաձայնել ՀՀ տարածքում ՄՀԳ Նորմերով ցանկավորված հիվանդությունների վերահսկման, կանխարգելման եւ արմատախիլ անելու բնագավառում հաջորդաբար ad hoc նիստեր անցկացնելու վերաբերյալ, որոնց անցկացման ժամկետն ու եղանակը կորոշվի Կողմերից մեկի պահանջի եւ մյուս Կողմի հաստատման հիման վրա,

- ՄՀԳ Նորմերով նախատեսված՝ անասնաբուժությանն առնչվող ապրանքատեսակների ներմուծումը, արտահանումը եւ տարանցումն իրականացնել առողջապահական արձանագրություններին եւ դիագնոստիկ կարանտինին համապատասխան,

- ապահովել, որպեսզի անասնաբուժությանն առնչվող ապրանքատեսակների ներմուծումն իրականացվի իրավասու մարմնից նախնական թույլտվություն

սպանալով, որը պետք է բավարարի ՀՀ առողջապահական պայմանները եւ կազմված լինի անգլերեն,

- որպես արտահանող երկիր՝ ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը բավարարի նպատակակետ երկրի՝ Իրանի առողջապահական պայմանները եւ հաստատի վերոհիշյալ պայմաններն անգլերենով կազմված պաշտոնական անասնաբուժական հավաստագրի շրջանակներում՝ ՄՀԳ Նորմերով ներկայացված ձեւերի համաձայն, ինչպես նաեւ ապահովել, որպեսզի անասնաբուժական առողջապահական հավաստագրի բնօրինակը լինի ուղեբեռի հետ եւ անասնաբուժական սահմանային հսկիչ կետերում փոխանցվի անասնաբուժական տեսուչներին,

- անասնաբուժությանն առնչվող ապրանքատեսակների տարանցումն Իրանական կողմի տարածքով իրականացնել Իրանի իրավասու մարմինների նախնական թույլտվությամբ՝ ՀՀ իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական առողջապահական հավաստագրի բնօրինակի ներկայացմամբ,

- ՀՀ ներմուծվող բեռի՝ կենդանիների եւ մարդու առողջությանն սպառնացող հիվանդություններով վարակիչ լինելը հաստատված լինելու հետեւանքով այդ բեռը վերադարձնելու կամ ոչնչացնելու դեպքում այդ մասին ծանուցել Իրանական կողմին՝ նշելով դրա պատճառները եւ ներկայացնելով փաստաթղթերը,

- ՀՀ տարածքում անասնաբուժությանն առնչվող ապրանքատեսակների վերահսկողությունը, ստուգումը, լաբորատոր ուսումնասիրությունը համատեղ իրականացնելու դեպքում Իրանական կողմին տրամադրել պահանջվող անհրաժեշտ պայմաններ, սարքավորումներ ու գործիքներ:

3. Համաձայնագրի համաձայն՝ բեռների վերադարձման եւ ոչնչացման դեպքում վնաս կրած Կողմն իրավունք ունի, բեռի վարակիչ չլինելու վերաբերյալ պատճառները եւ հիմքերը ներկայացնելով, բողոքարկել դատական իշխանություններին եւ պահանջել կրած վնասների փոխհատուցում:

4. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության դրույթներին եւ ընդլայնում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների եւ պետության հիմնական խնդիրների իրականացման հնարավորությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2006 թվականի նոյեմբերի 29-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ կենդանիների առողջության եւ անասնաբուժության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

6 մարտի 2007 թվականի
ՍԴՈ-682